

ՀԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

ԱՐԵՎԱՊԱՇՏՏՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԸՍՏ ԲՐՈՆՁԵ ՊԵՂԱԾՈՒ ԻՐԵՐԻ

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի առաջին քառորդում Անդրկովկասում կատարված դավաբարանները պեղումներից պարզվեց, որ սրանց զգալի մասը պատկանում է բրոնզի վերջին կամ վաղ երկաթի դարերին: Միաժամանակ պարզվեց, որ պեղված զերեզմանները բավականաչափ առատ են կերամիկայի բազմազան տեսակներով և մետաղե մեծաքանակ իրերով: Նշված ժամանակաշրջանին պատկանող գրեթե բոլոր դավաբարաններից հանված են բրոնզե բազմաքանակ իրեր՝ զենքեր, գործիքներ, պերճանքի առարկաներ, պաշտամունքային նշանակութուն ունեցող իրեր և այլն:

Նշված պեղումների մասին լույս են տեսել ինչպես համառոտ հաշվետվություններ, այնպես և հատուկ աշխատություններ, քայքայ զրանցից և ոչ մեկի մեջ գոտիներին վերաբերող բացատրություններում, քննություն չեն առնվել արևապաշտություն հետ կապված քանդակները, թեև հրատարակված գոտիների վրա եղել են արևը պատկերացնող նշաններ և նույնիսկ կոմպոզիցիաներ:

Թերևս իրավացի լինենք ասելու, որ մեր թվագրությունից առաջ, առաջին հազարամյակի սկզբում՝ Հայաստանի նախաբնիկի հավատալիքների մեջ արևապաշտությունը բռնել է գլխավոր տեղերից մեկը: Այդ հաստատվում է Սևանի ավազանում Ե. Լալայանի գտած գոտու վրա եղած փորագրություններով և Սանահին գյուղում 1946 թ. հայտաբերված բրոնզե գոտու վրա քանդակած կոմպոզիցիոն պատկերներով և արևի գունդը պատկերող սիմվոլիկ շատ նշաններով:

* * *

Սևանի ավազանում գտնված բազմաթիվ գոտիներից մեկի մասին ինքը Լալայանը գրում է.

Ե՛րև գտած գոտիներն ընդհանրապես ծածկված են զարդա-

Նկարներով, բայց, դժբախտաբար, բոլորը դեռևս մաքրված չեն, բացի մեկից, որի վրա նկատելի եղավ հետևյալ տեսարանը: Մի մարդ, ըստ երևույթի թռչունի գլխով, ձախ ձեռքով բռնած է մի մեծ աղեղ, իսկ աջով նետ՝ քաշելով լարը. նրա առջևից գնում են երկու ձի, ուսերին՝ մի լուծ: Սրանցից վերև նկատվում է բղզանման մի միջատի պատկեր: Ձիերի առջև կանգնած է մի նետ, հետո՝ մի մարդ, նույնպես թռչունի գլխով, աղեղը ձեռին: Բարձրում նկատելի է մի անվի պատկեր: Գոտու վերին մասը զարդարված է երկու շարք սպիլալ գորզանկարով: Հավանորեն այսպիսի զարդանկար եղել է նաև գոտու ներքին մասում, որովհետև թեպետ այս մասը կտարված է, սակայն մնացած փոքրիկ կտորի վրա նկատելի է մի սպիլալ: Մարդկանց հպուստը նկարված է գծիկներով, նույնպես գծված են և ձիերը: Վերջիններիս գլուխները, մանավանդ ականջները, չափազանց մեծ են, մինչդեռ ոտները շատ կարճ են»¹ (ն' 1):

Ահա այն ամենն, ինչ ասել է Լալայանն իր գտած գոտիների մասին: Նկարագրության մեջ չի երևում, թե որ դամբարանից, երբ և ինչ միջավայրում է գտնվել գոտին: Բավարարվելով թեթևակի նկարագրությամբ, հեղինակը բաց է թողել քանդակները բացատրությունը, գոտին չի մեկնաբանել ինչպես որ հարկն է: Բաց է թողնված նաև գոտու չափսերը: Լալայանը չի ասել, որ ձիերն ունեն նեղ պարանոցներ, իրանները բարակ են, իսկ գավակները հաստ, որ սրանց մոտ սմբակների փոխարեն երևում են կեռ մազիկներ և երկար ու սրածայր պոչեր:

Այն, ինչ Լալայանը ներկայացնում է որպես «բղզանման մի միջատի պատկեր», այդ թռչունն իրականում արև աստծո կապի սիմվոլն է, որ թռիչքի պահին երևում է ձիուց վերև, ճիշտ այնտեղ, որտեղ երևում է Սանահինի գոտու վրա քանդակած ազուավի պատկերը. միայն այն տարբերությամբ, որ Սանահինի գոտու վրայի թռչունը կանգնել է ձիու մեջքին, իսկ Սևանի ավազանի գոտու վրա քանդակած է թռիչքի պահին: Ինչ վերաբերում է «բարձրում նկատվող անվի պատկերին», ապա ենթադրում ենք, որ դա ոչ թե անվի պատկերն է, որի ներկայությունը գոտու այդ մասում չի արդարացվում և պատկերն էլ բնավ անվի նման չէ, այլ դա արևի նշանն է, որպիսին քանդա-

¹ Ե. Լալայան—«Երամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում», Երևան, 1931 թ., էջ 186—187:

Վաճ է և Սանահինի գոտու և բրոնզե շառ ալ իրերի վրա: Սե-
վանի ավազանում հայտարեցված բրոնզե իրերի մեջ արևը պատ-
կերող սիմվոլիկ շառ նշաններ ունենք, որոնք, ինչպես երևում
է, արևապաշտութեան շրջանում տարածված են եղել լայնորին:
Ամենից ավելի տարածված են արևի գունդը պատկերացնող
ճառագայթավոր կտրված քներով անվաճ սկավառակները:



Նկ. 1. Սևանի ավազանում հայտանի գտած բրոնզյա գոտու
բեկորի քանդակները (վերաբաղադրութուն)

Հայտնի է, որ հնում շառ ժողովուրդների մոտ արևի գունդն
իր պտույտի պահին պատկերացվել է, որպես անիվ:

Գերմանական դիցաբանութեան մեջ անիվն արևին համա-
գոր հասկացողութեամբ է պատկերացվում: Ասորու-բարելացի-
ներն Ասուրին պատկերացնում էին թևավոր գնդի ձևով, եգիպ-
տացիները նույնպես իրենց Հայր աստծո խորհրդանշանը ներկա-
յտցնում էին՝ Արևը պատկերող անիվով:

Արևի գունդը հայոց մեջ նույնպես ներկայացվել է անիվի
պատկերով:

Եւ ին ատեն Արևու տոնը կատարելու միջոցին կրակ դար-

ձած անիվներն օդը կնետեին... կամ լուսնին վար կզլորեին արևը խորհրդանիշ ուզելով... Որք ընդ արեգական մերկ չկարեցե՞ն հայել նային ընդ շուրն և դամենայն իսկ զանիւն տեսնին»¹

Ինչնիկ կողրացին խոսելով հունական իմաստասիրութեան մասին գրում է.

«Նւ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական գանուէն կախեալ կան: Նւ ինքն մի է և բազում; և բազում է և մի, որպէս արեգակն մի է և բազում, զի մի անիւ է և բազում՝ ճառագայթք»²

Հնում արևի սկավառակը պատկերացվել է որպես անիվ, նրա ճառագայթները՝ որպես անիվի ճաղեր, իսկ ընթացքը՝ անիվի պտույտ:

Այսպիսով Լալայանի նկարագրած գոտու վրայի անիվի պատկերն արևի սիմվոլիկ պատկերացման մարմնավորումն է:

Ե. Լալայանի նկարագրած գոտու վրայի ձիերի պատկերներն իրենց քանդակի ոճով և արտաքին տեսքով նման են Սանահինի, Մուսի-Նրի, Ախթալայի գոտիների վրա եղած քանդակներին: Այս գոտու վրա փորագրված ձիերի պարանոցների շրջված լուծը՝ հար և նման է Սանահինի գոտու ձիերի վզերին դրված լծին: Այս իրողութեանը մենք ընդունում ենք որպես երկու միմյանցից ոչ հեռու գտնվող շրջանների միջև գոյություն ունեցած կապի ապացույց և թերևս նաև արվեստների մեջ եղած փոխադարձ ազդրսի հետևանք: Գոտու վրա քանդակած ձիերը Արևաստծո ձիերն են, որոնք անբաժան են Արևից:

Թոննադուխ որսորդների (Սևան, Մուսի-Նրի) և ձիերի (Սանահին) ֆալուսի նշանները, անտարակույս կապվում են հայր իշխանական շրջանում տնտեսութեան մեջ տղամարդու ունեցած իշխող դերի և ծննդաբերութեան ու բերքի պաշտամունքի հետ: Առաջին հաղարամյակի սկզբներում (մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհում տնտեսութեան մեջ հիմնական միավորը նահապետական ընտանիքն էր, որի գլուխ կանգնած էր տղամարդը:

¹ «Անդես ամսօրյա», Վիեննա, 1929 թ., էջ 638, ընդեր նայոց ժողովրդարեգական հավատալիքի մեջ», Գ. Ա.:

² Եզնիկայ կողրացոյ ընդ Մղանդոց, Վենետիկ, 1826, էջ 203—204:

³ Բ. Բ. Պիտրովսկի—«Հայաստանի պատմութեան և կուլտուրայի հնագույն էտապները», էջ 19; առանձնատիպ ՀՍՍՌ ԳԱ, 1944 թ., № 3—4 Տեղեկագրից:

Սա այն շրջանն էր, երբ նախաքննիչը պաշտամունքի առարկաները սեպտիմոնիան նյութականացնում և պաշտում էր:

Սևանի ավազանում հայտարարված բրոնզե պտուռ վրա քանդակած թռչնազուլի աղեղնավոր մարդիկ հետադայում Միհրապաշտության շրջանում լրիվ մարդացել են (անտրոպոմորֆիզմ) և դարձել Միհրի գործակից ու ջահակիր կրտսեանս և կառուողական պատանիները: Սրանք իրենց ձևաքերում բռնած նախիկն աղեղները այժմ փոխարինել են ջահերով, որոնք սիմվոլն են լույսի և խալարի:

* * *

1894 թվին Մեհրոպ եպիսկոպոս Տեր-Մովսեսյանը Սանահին գյուղում գյուղացիներից վերցրել է բրոնզե մի գոտի, որի մակերեսը մեծ մասամբ ծածկված է իրար հյուսված հայկական «շ» գրի ձևն ունեցող նշաններով և որը թողնում է շղթայի տպավորություն: Գոտու եզերքներով անցնում է պծիկներով արված գծեր: Գոտու եզերքներում ծակեր չկան: Գոտին մեջքին կապելու համար նրա ծայրերում արված է երեքական ծակեր, որից մեկականը ջարդվել է, ծայրերի անկյունները կլորացված են:

Գոտու նյութը բրոնզ է, նրա երկարությունն է 84 սմ, լայնությունը՝ 8,5 սմ: Գոտին ամբողջական է և այժմ գտնվում է Հայկական ՄՍՌ Պետ. Պատմական թանգարանում (ինվենտար № 691):

1946 թվի հունիսին Հայկական ՄՍՌ-ի Ալավերդու շրջանի Սանահին գյուղի բնակիչ Մոսինյան Գարեգինը նույն գյուղի կոլխոզի ակումբի թաղում հողային աշխատանք կատարելու ժամանակ հանդիպում է մի դամբարանի: Շուրջ երկու և կես մետր խորություն մեջից նա հայտարարում է կենդանազարդ մի կնուճ և բրոնզե գոտու մի քանի կտորներ: Ըմբռնելով իր գյուղափ պատմական և հնագիտական նշանակությունը կոլխոզնիկ Մոսինյանը պազարեցնում է հողային աշխատանքները և իրիրը Հուշարձանների Պահպանության կոմիտեի միջոցով հանձնում է Հայաստանի Պետական Պատմական թանգարանին, գույքամատյան № 1787—8449:

1946 թվի օգոստոսի 28-ին Մ. Մ. Գերասիմովը և Պոլլատեխնիկ ինստիտուտի ուսանող Արամազդ Պողոսյանը¹ մեկնում են

¹ Օղավելով առիթից մեր խորին շնորհակալությունն ենք հայանում ընկ. Ա. Պողոսյանին այն բանի համար, որ նա սիրահոծաբ կերպով իր մաս

Սանահին գյուղ և պեղում Գ. Մոսինյանի գտած դամբարանը:
 Ըստ Ա. Պողոսյանի տված գրավոր հաղորդման պեղվածանի
 ուղղված է եղել արևելքից արևմուտք, նրա երկարությունն էր
 է 2,4 մետր, լայնությունը՝ 1,4 մետր, խորությունը՝ գետնի մա-
 կերեսից 2,3 մետր: Գերեզմանի ներսի պատերը շարված են
 եղել դաշտային անձրակ քարերով, դամբարանն ունեցել է
 կամարաձև ծածկ: Գերեզմանը լցված է եղել անձրակաքար-
 քից բերված փխրուն հողով: Կմախքից պահպանված է եղել
 միայն գանգոսկրի մի քանի բեկորներ և մի քանի առամներ:
 Այս դամբարանից դուրս են հանվել 12 կավի ամաններ, 4 բրոն-
 զե ապարանջաններ, որից մեկը դարդարուն, ավելի քան 1500
 հատ մասսայից և սերզոլիկից պատրաստած ուլունքներ, մի քա-
 նի հատ մատանիներ, բրոնզե դարձարանքներ և մանր ու խո-
 շոր եղջյուրավոր անասունների ոսկորների մնացորդներ: Դամ-
 բարանից հանված իրերն այժմ գտնվում են Պետական Պատմա-
 կան թանգարանում (Երևան):

Ամենից սոսաջ անցնենք կճուճի նկարագրությանը:

Կճուճն ունի 18,5 մ բարձրություն, նրա վերի տրամա-
 դիծն է՝ 35,3 մ, բերանի տրամագիծը՝ 12,4 մ, հատակի տրա-
 մագիծը՝ 11 մ: Պարանոց չունի, շուրթերը լայն են ու տափակ՝
 պատերի հետ մերված: Ունի երկու տափակ, նուրբ շինված
 կամարաձև կանթեր, երրորդ և չորրորդ կանթերի փոխարեն
 ունի ձևաքոյ պատրաստած վազրանման երկու կենդանիների
 վերագիր արձանիկներ, որոնք ամրացված են եղել կճուճի վրա
 մինչև նրա թրծելը: Կենդանիներից մեկն այժմ կտրված է,
 Կանթերի և վազրերի արանքներով ցածրից, կողերի պատերի
 վրայով, դեպի բերանն են սողում չորս միատեսակ օձեր: Կան-
 թերը, շուրթերը և օձերի մարմինները նախշված են միատեսակ
 իրար հատող փշատերև գծերով:

Կճուճը շինված է գրգի վրա, լավ չմաղած կավահողից, թըր-
 ծված է բաց հնոցում՝ ցածր շերմատիճանի տակ: Գույնը սև է,
 անփայլ և անղարզ:

Դալով քննության առնվող բրոնզե գոտուն, պետք է ասել,
 որ նրա թիթեղը ձուլված է մեծ վարպետությամբ և ունի մեկ
 միլիմետր համաչափ հաստություն, թիթեղաղաշտը դարձարված
 գանձող այս դամբարանի վերաբերող նյութերը՝ պեղման մանրամասնություն-
 ների մասին, դրեց մեր արամոլոգիայի տակ՝ անարգել օգտագործելու
 նպատակով:

է քանդակներով: Թիթևիկ կտորները միացված են, դոսին ամբողջացված է: Դոսու աջ ծայրից պահասում է մի կտոր՝ երկու ձիերի քանդակների հետ: Դոսու երկարությունն է 96,5 սմ, լայնությունը՝ 15 սմ:



Նկ. 2. Օձադորդ կճուճ, գտնված Սանահիի դամբարանում

Դոսու վրա երեք տեղով փորագրված են քառաձիեր, սրանց միջև եղած ազատ տարածությունները քսանական սանտիմետր է: Քառաձիերը վերցված են 12 սմ երկարություն և 6,5 սմ լայնություն ունեցող փակ շրջանների մեջ: Ձիերն իրականում լինելով իրարից տարբեր, իրենց փորագրման ձևով և արտաքուստ միատեսակ են: Նրանց բոլորի պարանոցները երկար են՝ դեպի մարմինը հաստացող ու կոր, ականջները՝ նույնպես երկար են և դեպի առաջ կախված, սմբակները նմանեցված են կեռ մազիկների, պոչերը կարճ են:

Դոսու «Բ» վերջավորութայն վրա քանդակած ձիերի պոչերը տարված են դեպի վեր:¹

¹ Գայմանականորեն ընդունում ենք դոսու ձախ վերջավորությունը «Ա» ծայր, իսկ աջ կողմի վերջավորությունը սրպես «Բ» ծայր:

Ի՞նչու երեք ձիաքառյակները քանդակված են դույզ-դույզ և պատկերացված են քառասորով վաղքի ժամանակ: Ձիերից մի քանիսն ունեն Ֆալուս, իսկ մնացածներն փորերի տակից կախված են պարուրածն զծեր: Գոտու «Ա» և «Բ» ծայրերին արված են երեքական ծակեր, գոտին մեջքին կապելու համար: Գոտու երկու եղբերով նույնպես արված են ծակեր՝ շորի կամ կաշվի վրա ամրացնելու համար կամ մի այլ նպատակով: Թիթեղի վրա աղատ տարածուք յուններ չեն թողնված:

Գոտու «Ա» ծայրին քանդակած հետևի դույզի ձիերի մեջքից վերև երևում է արևի Ծ ՄՄ տրամադրած ունեցող ճառագայթաձև սկավառակը:

Արևի այս դիրքը մենք ընդունում ենք որպես արևածագը՝ դարուն, քնության դարթոնք: Այնուհետև արևի դուռնը շարժվելով դեպի առաջ, գոտու թիթեղի կենտրոնում քանդակած քառաձիերի մոտ երևում է երկու տեղով:

ա) Այս քառյակի հետևից ընթացող դույզի ձախ կողմի ձիու գավակի վերերը: Այս դեպքում արևը գտնվում է զենիթում:

բ) Այնուհետև արևի նշանն իջնելով ցած, երբորդ անգամ երևում է նույն քառաձիերի առջևից սլացող դույզի աջ կողմի ձիու կրծքի դիմաց: Արևի այս դիրքը ընդունում ենք որպես մայրամուտ:

Այս արևի սկավառակը մայրամուտի կետից նորից բարձրանում է վեր ու չորբորդ անգամ երևում է գոտու «Բ» վերջավորության վրա քանդակած ձիաքառյակի մոտ: Այս դեպքում արևը գտնվում է երկրորդ արևածագում՝ իր երկրորդ գարթոնքում: Արևի այս դիրքն ամենին չի տարբերվում առաջին անգամ երևացող արևի դիրքից:

Այսպիսով գոտու վրա քանդակած արևի նշանը կատարեց իր մի օրվա լրիվ պտույտը:

Ներսես Շնորհալին արևի մասին տալիս է հանելուկի ձևով անմոռանալի հետևյալ պատկերը.

«Տեսի զմանուկ մի որ ծնանէր,
 Եւ ի նոյն օրն մեռանէր.
 Յետ թաղելոյն դարձեալ յառնէր,
 Ի այլ գեղեցիկ դինքն ցուցանէր»¹

¹ Ն. Շնորհալի — «Բանք շափաւ», Վենետիկ, 1830, էջ 564 (Ի Ա Արեղակն):

Սա ամբողջությամբ վերաբերում է Սանահինի գոտու վրա քանդակած արևի մեկ օրվա շարժմանը:

Գոտու թիթեղի վրայի շորրորդ պատկերը մի թռչունի քանդակ է, որը նմանեցված է ազոալի: Գոտու կենտրոնում արևի մայրամուտի վայրում երևում է հինգերորդ Ֆիզուրը՝ լուսնի եղջյուրավոր պատկերը, որի հետ թըվում է թե, ձիերը պայքարի մեջ են մտել:

Գոտու վրա վեցերորդ Ֆիզուրը, որ երևում է ըստը քառաձիերի առջևի զույգերի ձախակողմյան ձիերի պարանոցների մոտ, դա վերից արձակած նետերի պատկերն է: Բոլոր քառյակների վերջին զույգերի պարանոցները ծակոտիներ ունեցող լծանման հարմարանքով միացված են իրար: Դա յոթերորդ Ֆիզուրն է:

Նկարագրած պատկերներից բացի, գոտու վրա մնացած ազատ տարածություն մեծ մասը լցված է երկրաչափական նշաններով և անվերջ ծնվող ու մեռնող պարույրներով:

Գոտու վրա փորագրված Արևի ծնունդը, նրա ծերությունը (մայրամուտ) և դարձյալ ծնունդը (արևածագ) որևէ աղերս չունեն արդյոք գոտու եզերքներով անցնող պարույրների անընդմեջ կրկնվող շարանների հետ: Պարույրները որոշ կետից սկիզբ առնելով՝ ծնվում են և իրար չհատող պտույտների միջոցով հասնում են անկման կետին և դարձյալ ոլորտավոր գալարումներով պատվում ու դուրս գալով մեկի միջից կազմում են նոր պտույտ: Այսպես անվերջ պտտվում են



Նկ. 3. Բրնդե կամ գտնված Սանահինի գոտու վրա զամբարանում (գծագրու թյուն ճարտ. Կ. Մազարանի)

ու կրկնվում նմանվելով արևի օրական պտույտին: Ոլորանները հնում հավիտենականության սիմվոլ են եղել:

Վերևում նկարագրված բոլոր պատկերները և երկրաչափական նշանները քանդակած են ձեռքով, սրածայր մետաղյա գործիքի միջոցով՝ որպես, նուրբ և բարձր ճաշակով: Ակներն է թիթեղադաշտը փորագրող անձի ստեղծագործ երևակայությունն ու մեծ վարպետությունը:

* * *

Նախարանիկի համար բնության մեջ տեղի ունեցող երեվույթներն էությունը մնում էր անվերծանելի և առեղծվածներով լի: Բնության ոչ բոլոր չար դիպվածներն դեմ էր, որ նա կարողանում էր կռվել, նա իրեն երբեմն մինակ էր զգում, այդ իսկ պատճառով շատ հեռավոր ժամանակներից նա իրեն դաշնակից էր փնտրում կենդանիների մեջ: Բնության դեմ մղվող դժգոհ պայքարում մարդը որոշ իմաստով կախման մեջ էր ընկնում կենդանական առանձին խմբերից:

Կենդանիների մեջ Հայաստանի հին բնակիչը տեսնում էր նույն սգին, ինչ որ մարդու մեջ: Այդ սգին, որպես թե պիտի ապրի նաև կենդանու մահից հետո՝ մարդու ողու նմանությամբ: Այստեղից էլ մարդու համար պատկերանում էր, թե կենդանին կարող է մարմնացված աստվածություն լինել, կամ կերպարանափոխված մարդկային սգի, որը նոր կյանք է դաել կենդանու մեջ: Եվ ահա սկիզբ է առնում առտեմիզմը, որի մնացորդները երևում են մեր ժողովրդի հավատալիքների, սնտախաղաղությունների, նախապաշարունակների, բանահյուսությունների մեջ և հնագիտական իրերի վրա:

Տոտեմի կենդանին անձեռնմխելի է, սրբազան, այն ճանաչվում է որպես տվյալ տոհմի, ցեղի, մարդկային խմբի, մինչև իսկ ընտանիքի նախածնողը՝ նախահայրն ու նախամայրը: Ցեղը, երբեմն նաև տոհմը նույնպես կոչվել է իր տոտեմ կենդանու անունով: Սրբազան տոտեմը գտնվել է տաքուի հովանավորման ներքո:

Հայկական լեոնաշխարհի հին բնակիչն իր սկզբնական հավատալիքները կապել է տոտեմի հետ, իսկ էլ ավելի ուշ կենդանիների պաշտամունքը փոխարինվել է երկնային լուսատուների պաշտամունքով:

Կրոնածիսական ըմբռնողութեան հետ կապված հասկացողութեանները կենդանական աշխարհից փոխադրվել են անկենդան աշխարհը: Մարդն իր հավատալիքները կապել է լուսատուների հետ, նրա պաշտամունքի առարկաները, աստվածները երկրից բարձրացան երկինք:

Սոսիւլով լուսի և կրակի առաջացման պատճառների մասին, Ալիշանը գրում է.

«Եթե ասոնց պաշտոնն կանխեր է ոմանց ազգաց մեջ և լուսը երկնից երկիր իջուցեր է, կրնամք կարծել թե թերես Հայք՝ երկրե երկինս հանած ըլլան զայն պաշտոն»¹

Մարդն իր հավատալիքները կապեց Արևի, Լուսնի և մնացած հինգ լուսատուների, այն է՝ Փայլածուի, Արուսյակի, Հրատի, Լուսնթազի, Երևակի հետ: Այս լուսատուների մեջ Արևն էր ամենազորը, իր ջերմութեամբ և լուստով կենսարարն ու հզորը. հավանաբար, հենց այդ պատճառով էլ այն ճանաչվեց ամենազոր՝ տարածական պաշտամունք: Նախաբնիկն իր երևակայութեան մեջ Արև աստծուն առանց գործակիցների չէր պատկերացնում, և ահա, այստեղից էլ առաջացան նրա գործակից կապավոր թռչունները (Ագռավ, Անգղ, Արծիվ), ձիերը, իսկ էլ ավելի ուշ նաև մարդիկ (Միհր—Արևի գործակից) Կառուտես և Կառուպատես:

Մեր կողմից քննութեան առնվող գոտիները կապվում են Հայաստանի բնիկների այս շրջանի արևապաշտական համոզմունքների հետ: Ավելի ուշ, լուսատուների պաշտամունքը փոխարինվեց նոր աստվածներով, Արև գլխավոր աստվածը մարդացվեց, առաջացավ Միհրը, որն աստիճանաբար հզորանալով վանեց ըստ աստվածներին ու ինքը դարձավ երկնքի սյունը, հզոր աստվածը: Այս մասին իր տեղում:

* * *

Դառնալով գոտու պատմական և հնագիտական արժեքավորմանը, կարևոր ենք համարում նկատել, որ մեզ հետաքրքրող առարկաները գտնված են առաջին հազարամյակի (մ. թ. ա.) սկզբներին պատկանող դամբարաններից, որոնցով հարուստ է Հայաստանը և հատկապես Սևանի ավազանն ու Լոռին:

¹ Ղ. Ալիշան—Վին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 42:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը հեռավոր անցյալում կովկասում բրոնզի կուլտուրայի ստեղծման ու տարածման գործում իր արժանավայել տեղն է զբաղիլ:

Հազարամյակներ առաջ այստեղ պատրաստում էին բրոնզե գինեքեր, գործիքներ, պերճանքի պարագաներ, պաշտամունքի առարկաներ. վերջին խմբի մեջ են մտնում Սևանի և Մանասինի հնագույն շրջանին պատկանող դամբարաններից հանված բրոնզե քանդակազարդ գոտիները: Այս գոտիներն առաջին խոսուեն վիպներն են, որ ամբողջական գտնվածք են տալիս հին Հայաստանի բնակիչների արևապաշտական համոզմունքների մասին: Այս գոտիների գոյություն փաստը, որպես առարկայական ապացույց, օգնում է մեզ պնդելու, որ առաջին հազարամյակի (մ. թ. ա.) սկզբներում Հայկական լեռնաշխարհը ևս գտնվում էր արևապաշտութան ոլորտում:

Արևի և կրակի առօժո պաշտամունքը շատ ավելի խոր է թափանցած հայ քաղաքակրթության ծալքերը և նրա հավատալիքով շատ ավելի են տոգորված եղել հայ դանդաղները, քան կարծվում է մինչև հիմա¹

Արդարև արևի պաշտամունքը խոր արժատներ է ունեցել հայոց մեջ և այն տարածվել է Հայաստանի սահմաններից շատ հեռուները: Արևը միշտ շրջել է արևավառ Հայաստանի բնակիչների հետ՝ նրա մայր երկրում և նրան մատուցել լույս ու ջերմութուն, ապահովել նրան բերքով և այլ բարիքներով: Թերևս այդ էր պատճառը, որ երբ կենսատու արևի հրավառ գունդը խավարում, կամ ծածկվում էր անթափանցելի ամպերի տակ, հուզվում էր արևապաշտ բնակիչը և ընկնում հուսահատ արևոթության մեջ ենթագրիչով, որ քաջբեր փակած պիտի լինեն արևի դեմը: Արևի հաճախակի կորուստն ի վերջո նրան բերեց այն մտքին, թե անհրաժեշտ է պաշտվող Արևի պատկերը մշտապես ունենալ աչքի տուշ, և իրոք, այն տեսքով, ինչպես նա պատկերացնում էր արևի ճառագայթավոր գունդը՝ նկարեց իրի վրա և արևի փոխարեն սկսեց պաշտել այդ իրը:

«Հնագուներից համար՝ Արեգակն առիթ մ'էր կրոնից, հետո պատվելի եղավ, և այլ հետո պաշտելի. պաշտոնն ուղեց չտեսած ատենն այլ տեսնել զԱրեգակն. և հնարեց անոր պատկերք, նախ բնաձև և, ապա անձնական և մար-

¹ «Հանդես ամսօրյա», 1927 թ. № 8, էջ 453:

դաձև... Հավանոր հին Հայք ուրիշ ազգաց պես՝ նախ զԱրե-
զակն պատված և պաշտած պիտի ըլլան՝ ետկինս, իբ
տո՛րերևույթ շրջանին մեջ, մանավանդ ծագած ու ծածկված
ատեն՝ ի հորիզոնի. հետո բոլորակի ձևով ներկայած, ապա
և մարդակերպ:.. հետո և առանձինն անուն տալով իբրև
զատ ասածո. և այսպես այլ և այլ ազգք այլ և այլ կեր-
պով կոչեցին. Քաղզևացիք՝ Բել կամ Բահաղ, Ասորեստան-
ցիք՝ Աքուր կամ Ասուր, Պարսկաստանու զանազան ազգք՝
Բելփեգովր, Մողոք, Փյունիկեցիք՝ Ադոնիս, Պարսկք՝ Միհր,
Եգիպտացիք՝ Օսիրիս, Հույնք և Լատինք՝ Փեբեոս և այլն:՝¹

Կոմենտարիաներն ավելորդ են: Ալիշանի կարծած
«բոլորակի ձևով» Արերը պատկերացված է Սևանի ավազանի և
Մանասինի գոտիների վրայի քանդակների միջոցով. իսկ այս
գոտիները պատկանում էին հին Հայաստանի բնակչի արևին
նվիրված համոզմունքներին:

* * *

Արերը միշտ դիտվել է որպես ջերմության և լույսի կենսա-
բար ազդուր: Արևավառ Հայաստանի հին բնակիչը մեծ սպա-
սելիքներով և հույսերով կապված է եղել Արևի հետ և երկրպա-
զել ու զոհ է մատուցել նրան: Այդ բանը երևում է քսենոֆո-
նյան ժամանակի Հայաստանում արժենների կողմից արևին
մատուցվելիք զոհերով, որի մասին վիպուկորեն ենք հանդի-
պում «Անարագիս»-ում.

«Ապա Քսենոֆոնտը մեկնեց տանելով գուղապետին
նրա ընտանիքի քով, և իբ պառավ ձին, որ ստացել էր՝
տվեց գուղապետին, որ կերակրե ու զոհ բերե, որովհետև
լսել էր՝ թե նվիրատրված է Արևին»:՝²

Անշուշտ Քսենոֆոնի ժամանակ Հայաստանը արև էր
պաշտում: Վիպուկորեններ ունենք այն մասին թե.

«...կային և Հայք Արեգակնապաշտք կամ Արեգնա-
պաշտք... են ոմանք Հայկազյանք և հայ լեզուաւ արևա-
պաշտք, և կոչին արևորդիք... և ընդ որ (կողմն) երթայ
արեգակն՝ ընդ այնմ երկրպագանեն և պատվեն...»:՝³

1 Ղ. Ալիշան—«Հին հավատք», էջ 84—85:

2 Քսենոֆոն—«Անարագիս», հատված 7, գիր 4-րդ, գլուխ 5 (35), ակադ.
Հ Մանանդյանի թարգմանությամբ. Քննական տեսություն հայ ժողովրդի
պատմության, Երևան, 1944 թ., էջ 391:

3 Ղ. Ալիշան—«Հին հավատք», էջ 85—93:

Հաղարամյակների ծալքերում թողնելով իր սկզբնական ուժն ու զորությունը, բոլորի համար բարի փրկիչ և կենսարար արևը ժողովուրդների հավատալիքում աստիճանաբար թուլացավ և որպես պաշտամունք օտարացվեց, բայց չմահացավ, այլ ապրել սկսեց իր փոփոխականների միջոցով մարդկային կերպարանքով: Թեև դոյության կռվում պարտվեց, մոռացվեց, բայց այնուամենայնիվ նրա վերապրուկները մինչև այժմ էլ մնում են հայոց մեջ և օտար ժողովուրդների մոտ:

Եթե հին հույները և փոյուզացիք իրենց քաղաքները կոչեցին Աթանաս, իսկ Աթանասն Արևի աստվածն էր, ապա եգիպտացիք և քաղկեդոնացիք քաղաքներ նվիրեցին Արևին և կոչեցին Արևակ քաղաք (Հելիոպոլիս):¹ Նույնը երևում է մեզ մոտ տեղանունների և անձնանունների մեջ: Մինչև այժմ էլ գործածական է մեզ համար.

«Երդմնածև կամ փաղաքշանոք՝ Արևդ սիրեմ, երե Արևդ սիրես, Արևուդ մեռնեմ»: ²

Անձնանունների մեջ՝ Արփիկ, Արփենիկ, Արև, Արևիկ, Արեզնազան և այլն, որոշ դեպքերում որպես դեզեցիկ հասկացողություն լեռները, վայրերը կոչվել են՝ Արևիկ, Տարոնում կա «Արեզնածագ» անունով բլուր, Մեղրին հնում կոչվում էր Սյունիքի Արևիկ գավառը, Սևանի լճի հյուսիսային կողմում ընկած լեռնաշղթան Արեզունի է կոչվում և այլն:

Արևապաշտությունը չի սահմանափակվել մի ժողովրդի մեջ և մի երկրով, այն երկրածավալ կրոն է եղել Արևելքում և Արևմուտքում Արևի պաշտամունքը ընդգրկել է մարդկության զգալի մասը և ապրել է բազմաթիվ դարեր: Այժմ դժվար է նշեք արևի պաշտամունքի սկիզբը կամ վերջը: Ինչպես Հայկական լեռնաշխարհի, այնպես էլ մյուս երկրների համար. թեև ուսանք փորձում են արևապաշտության սկիզբը որոնել Բաբելոնում...

Հիրավի, անհնարին է գտնել արևապաշտության սկիզբը կամ վերջը, առավել ևս նրա հայրենիքը, քանի որ արևապաշտությունը մի երկրում սկիզբ առած երևույթ է, այն համամարդկային է, այնքանով, որքան

«Հի՛ն, մարդկության չափ հին է պաշտամունքը
«լույս»-ին»:³

¹ Ն. Տաղավարյան—«Հայոց հին կրոնները» Կ. Պոլիս, 1902, էջ 25.

² Ղ. Ալիշան—անդ. 87—88.

³ Գր. Նսամյան—«Կորնթյան Նամականի», Բուքրեշ, 1938 թ. էջ 50.

Անուրանալի իրողութեանն այն է, որ այժմյան Առկեալական Հայաստանի տերիտորիայում ապրող եզիդները մինչև այսօր էլ երկրպագում են Արևին: Արևը եզիդներին մտա կոչվում է Ծամս: Ծամսն արարելն նշանակում է Արև:

Արևի երկրպագման արարողութեանը կատարվում է այսպես՝ առավոտները արևածագից առաջ ձերբունի եզիդները չոքում են զեանին դիմքով դեպի արևելք և սպասում արևի ծագմանը: Երբ հետո արևելքում հորիզոնը ծիրանագույն է հագնում և սահելով աստիճանաբար բարձրանում է արևի գունդը, նրանք չոքած վիճակում բարձրացնում են ալ ձեռները և դնում ճակատներին, ապա իջեցնում են զեանին և կրկին բարձրացնելով դնում են կրծքերին կիսով չափ խոնարհվելով դեպի նորածագ արևը և նորից ձեռները դնում ճակատներին ու այսպես երեք անգամ կրկնում են իրենց աղոթքը նոր ծագող արևի հրավառ գնդի առաջ:

Աղոթում են ամենակարող Արևին «Ծամսին», որ նա օգնի իրենց ընտանիքին և անասունները պահպանի, դալակ չունեցողին որդի պարգևի, հիվանդներին առողջութեան բերի, նեղ տեղն ընկածներին օգնութեան հասնի և ազատի նրանց ամեն տեսակ չարիքներից:

Նրանք երգվում են Ծամսի անունով ասելով.

«Ծամս Մալա մըն խարաբիկ, ագար մըն ֆաստիյա տա կըրիս» — (Ծամսը տունը քանդի, թե ես բամբասել եմ քեզ):

«Ծամս կյուրի մըն բկոմա ագար մըն պաղե տա դգիտ» — (Ծամսը թող սպանի որդուս, եթե գողացել եմ ոչխարդ):

Երբ ընկնում են դժվար կացութեան մեջ և օգնութեան պահանջ են զգում, դիմելով Ծամսին ասում են.

«Յա Ծամս այու քումակե բըդի մըն»

(—Ով Ծամս, դու օգնութեան տուր ինձ)

Երբևէն անիծում են իրար: Ի դեպ, այս առթիվ կան բազմաթիվ ասացվածքներ. օրինակ ասում են.

«Բրա Ծամս կուրե տա բկումա»

(—Թող Ծամսը որդուդ սպանի)

Ծամս դովլաթե տե բզալինա

(Ծամսը քո դովլաթը կտրի):

Իր սկզբնական ուժն ու գործընթացը թողնելով հազարամյակների խավարում, բարի, փրկիչ և կենսաբար Արևը ժողո-

վերադարձնելի հավատալիքում աստիճանաբար թուլացավ և որպես պաշտամունք օտարացվեց, բայց չմահացավ: Արևի պարտու-թյունը նրան մահվան չհասցրեց, այլ նա ապրել սկսեց փոփոխակներին միջոցով, մարդկային կերպարանքով:

Սոսելով իրոկեզական տոհմի մասին, հնդկացիների յուրահատուկ բարբարոսական կրոնական պատկերացումներին վերաբերող մասում Ֆրիդրիխ Էնդելսը գրում է .

«Նրանց ղրցարանությունը դեռ մինչև այժմ էլ ամենին քննադատորեն ուսումնասիրված է: Նրանք իրենց կրոնական հասկացողությունների մարմնացումները—ամեն տեսակ ոգիներ—պատկերացնում էին արդեն մարդկային կերպարանքով, սակայն բարբարոսության ստորին աստիճանը, որի վրա գտնվում էին նրանք, դեռ չի ճանաչում շոշափելի պատկերներ, այսպես կոչված կուռքեր: Դեռ իշխում է ընտելյան և տարբերային ուժերի պաշտամունքը, որը սակայն սկսում է զարգանալ դեպի բազմաստվածություն»:¹

Անտարակույս պաշտամունքի այս շրջանում է ծնվել Միհրը աներևույթ, բայց Արևը մարմնավորող մարդակերպ նոր աստված, որը զոյամարում հաղթեց Արևին:

Ժայռածին, կամ ստորերկրյա աշխարհից ծնված Միթրան իր ծննդյան առաջին շրջանում, դեռ մանուկ հասակից մեծամարտի մեջ է մտնում Արևի հետ և հաղթում նրան, վերջինս (Արևը)

«...ստիպված էր ենթարկվել իր խեղճանի գերադան-ցությանը և նրանից ընդունել իր ինվեստիտուրան: Հաղթանակողը (Միթրան) դնում է նրա գլխին ճառագայթաբաձակ թաղը, որը նա կրում է այդ պահից սկսած իր ամենուրյա վազքի ընթացքում: Ապա նա կրկին վեր է բարձրացնում նրան և կնքում նրա հետ հանդիսավոր բարեկամական դաշինք, մեկնելով նրան իր աջ ձեռքը: Դրանից հետո այդ երկու դաշնակից դուցազուհունները հավատարմությամբ օգնում են իրար իրենց հետագա բոլոր ձեռնարկություններում»:²

Միթրայի գլխավոր հերոսությունն առասպելական ցուլի սպանությունն է. վերջինիս արյունից առաջացավ երկրի

¹ Տ. Էնդելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1940, էջ 112—113:

² «Միտրա-Միհրի արքայականներն ու զործակիցները», Երևան, 1947 թ., էջ 297 (վերջված է Ֆր. Գյումոնից, Fr. Cumont):

պաղարերու թյունը: Միթրան ճանաչվել է աշխարհի միջնորդը, արարիչն ու փրկիչը: Միթրան հոգիներին առաջնորդում էր հանդերձ յալ աշխարհ. այստեղ Միթրան զատավոր է, նրա դատավարական սեղանի առջ պետք է կանգնեն ըլոր մեռյալները:¹

Մի այլ վարիանտում Միթրան ծնվում է ծառից, նա գլխին ունի փոշոգիական գդակ, աջ ձեռքին գանակ, ձախ ձեռքին լապտեր խավարը լուսավորելու համար:²

Այսպես էին մտածում Միթրայի մասին հնում, հավատում էին նրա դալստյանը, սպասում էին նրա ատյանին, վերջին դատաստանին:

Լինելով արևի, լույսի և կրակի աստվածը, նա մարդկությանը ջերմություն, լույս և կյանք էր խոստանում՝ հակառակ փնելով չարին ու խավարին:

Այանդարար ասում են, թե Ասորեստանի Սարգոն թագավորը նույնպես ծնվել է անարատ կույսից, նա ինքն իր մասին գրել է. «...ևս Սարգոնս Ագաթայի հզոր թագավորն էմ. մայրս ինձ հղացել է առանց հորս օգնության»:³

Ասորա-բաբելոնյան աստված թամմուզը, որը համարվում էր փրկիչ, նույնպես, ըստ ավանդության, ծնվել էր կույսից: Սրա մայրը՝ Իշտար աստվածուհին հղանում է մարտի 25-ին և կույս աստվածուհին անարատ հղությամբ ծնում է թամմուզին:

«Միթրային նրա խորագիրը քար արձանները սովորաբար ցլապսան են ներկայացնում, նրա աջ և ձախ կողմում կանգնած են երկու պատկերներ կրաբուս և կառաոպատես՝ լապտերները ձեռքերին: Առաջինը յուր լապտերը վեր է բռնած (առավոտ), երկրորդը գլխի վայր (երեկո): Այս երրորդությունն իրապես ձուլված մի անձնավորության մեջ. միևնույն Արևն է»:⁴

Հին Պարսկաստանում ամենափառահեղ կրոնածիսապան արարողությունները նվիրված էին լինում Արև աստծուն. «Արևին մատուցելիք ողջունի թափորը արևածագին»

¹ М. Брикнер—«Страдающий бог в религиях древнего мира», Москва, 1923 г. էջ 34—35.

² Հմմտ. Բ. Խալաթյանց—«Հայ ժողովրդական դրոշմադրական վեպը», էջ 63—64.

³ Նիսեմը—«Աստվածածնի տունը», Երևան, 1928 թ. էջ 10:

⁴ Բ. Խալաթյանց, առջ. էջ 62:

առաջ կհազմվեր: Քանհնայապետը թափորը կառաջնորդեր՝
անոր կհետևեին Մոզերու երկար շարան մը անրիժ ճերմակ
հագնված: Տաղեր կերգեին ու արծաթյա բուրվառներուն-
մեջ սուրբ կրակ կտանեին: Մոզերուն կհետևեին 365 պա-
տանիներ՝ կարմիր հագնված, որոնք կհերկայացնեին տար-
վա 365 օրերը և կՐԱԿԸ: Ասոնց կհետևեր ԱՐՄՎԻՆ, ԿԱՌԻՔԸ,
Թափուր, ծաղկե պսակներով զարդարված, որում լծած
կլլային հոյակապ ճերմակ ձիեր—զուտ սուկյա ասպազենով:
Հետո կուզար փառավոր կեցվածքով ճերմակ ձի մը, որուն
ճակատը սևունքով զարդարված կըլլար... Ճերմակ ձիուն
կհետևեր թագավորը սակեզարդ փղոսկրյա կառքին մեջ
նստած...»¹

Շքաթափորը կազմվում էր արևածագից առաջ և բարձ-
րանում էր Օրոնտես լեռան վրա ու այնտեղից խնկարկում և
երկրպագում Արև աստծո երկրի վրա ընկնող առաջին ճառա-
զայթները:

Այսպես էին դիմավորում արևածագը հնում:

Արդ՝ կրկին անգամ անդրադառնալով գոտիների վրա քան-
դակած ձիերի պատկերներին, հարկ ենք համարում հիշատակել
որ Միթրան մարդկության հանդեպ՝ երկրի վրա իր գլխավոր
պարտքը կատարելուց հետո՝

«Արևի քառաձի կառքը նստած բարձրանում է երկինք»²:

Կամ ինչպես ասված է մի այլ տեղ, ցլամարտում հաղթա-
նակ տարած Միթրային Արևը

Քառաձի կառքով իր բարեկամին բարձրացնում է եր-
կինք՝ աստվածների անուշակ գրախտը, որտեղ իշխում է հա-
վիտենական լույսը, անսահման երանությունն ու երջանկու-
թյունը:

Հայկական լեռնաշխարհի նախաբնիկը լրիվ գաղափար
ուներ Արևի մի օրվա մեջ կատարած պտույտի մասին, սակայն-
նրա երևակայության մեջ արևն իր շարժումը կատարում էր
ամենաարագավազ կենդանու օգնությամբ:

Արևապաշտ ժողովուրդների մոտ Արև աստծո վազքը ան-

¹ Մ. Գ. Յերեմյան — «Քրիստոնեություն և հին հեթանոս կրոններու քաղ-
դատականը», էջ 470—471:

² Բ. Խալքայանց — «Հայ ժողովրդական գյուլացահական վեպը», էջ 65:

շուշու, պատկերացվում էր ձիերի օգնութեամբ: Ձին որպես արագաշարժ, խելոք և օգտակար կենդանի կապվում էր Արևի հետ, որպես նրա շարժման սիմվոլը:

Հայաստանի հնագույն բնակչի երևակայութեան մեջ քառաձի կառքը ստեղծվել էր ոչ թե Արևի ուժը, այլ նրա վաղքի արագութեամբ, շարժման արագութեամբը ցույց տալու համար: Քառաձի կառք նստած Արևն արագորեն պատռելով գիշերային լիակարը լույս և ջերմութեան էր բերում մարդուն, որի կարիքը սուր կերպով զգում էր նա: Ամենուրեք ձիերն անբաժան են Արևից: Տիեզերական անհուն տարածութեանը ծառայել է Արևի քառաձի կառքի համար որպես անմրցակից վաղքի հրապարակ: Ինչ ավելին. հին Հայաստանի բնակիչը չէր սահմանափակվել Արև աստծո համար ձիեր ստեղծելով միայն, նա այդ ձիերից յուրաքանչյուրին կոչել է որոշակի անունով:

Ստեղծվել հայոց Տիգրան թագավորի բերած ռազմավարի մասին, Ղ. Ալիշանը գրում է.

«...անհավանելիք է՝ թե և անոնց մեջ ըլլային և հույն Արեգակներ, Ապոլոնի և Փերսուի կիրպարանք, կառք և երկվարք, Եստուց» (ձիերուն) զուցե հին ավանդութեամբ մի՛ այլ ոչ հին Ոսկեկորիկ գրիչ մի՛ անուններն այլ նշանակե, գրելով «Անվանք վարչաց Արեգական՝ Լնիկ, Մեհիկ, Բեհիկ և Սեհիկ»:¹

Այս անուններն ամենայն հավանակութեամբ հայկական ծագում ունեն և առաջացել են նախաքրիստոնեական շրջանի արևապաշտական Հայաստանում կարծում ենք, որ Արևի ձիերի անունները կարող էին տեղայնացվել և կոչվել յուրաքանչյուր ժողովրդի մեջ իրեն հարազատ անուններով: Քանի որ Արևի պաշտամունքն անկախորեն և թիրևս տարբեր ժամանակներում առանձին երկրներում առաջացած երևույթ էր, ուստի ձիերի անուններն էլ կարող էին նույնպես առաջացած լինել անկախաբար:

Թերևս ավելորդ է լինի մեր վերոհիշյալ մտքերն հաստատել մի այլ մեջբերումով, որից երևում է, որ Արև աստծո ձիերի անունները յուրաքանչյուր ժողովուրդ հարմարեցրել է իրեն: Այսպես օրինակ Օսկար Մեյֆերթի «Dictionary of Classical antiquities» բառարանի Հիլիոս բառի բացատրութեան մեջ Արևի

¹ Ղ. Ալիշան—«Հին հավատք», էջ 88—89:

ձիերի անունները ներկայացված են այսպես՝ էոս, էթիպոս, Բրոնտե և Ստորոպե:

Այս անուններով ձիերը, մեր կարծիքով Սևանի ավազանից և Սանահինից հանված գոտիների վրա քանդակած ձիերն են՝ Արևի ձիերը: Այս ձիերն, ինչպես և ինքն Արև աստվածը՝ նախաբնիկի երևակայության մեջ անընդհատ շարժման մեջ է պատկերացվել:

Ընդհանրապես մեզ անձանոթ են բրոնզե գոտիների վրա փորագրված մի որևէ կենդանու պատկեր (ձի, առյուծ, եղջերու, եղնիկ), որ փորագրված լինի կանգնած կամ պսակած վիճակում: Կենդանիները միշտ պատկերացվել են շարժման մեջ:

* * *

Դառնալով գոտու վրա քանդակած թռչունի պատկերին, մենք այդ քանդակը կապում ենք հունական դիցաբանություն մեջ հիշատակվող Պրոմեթեոս առաջին հրաբերի անվան հետ, քանի որ ըստ ավանդություն Պրոմեթեոսը դաժան սպառնալիքներն ու ծանր փորձություններն անտեսելով գիշեր ժամանակ գաղտադողի մտնում է Օլիմպոս՝ աստվածների բնակավայրը և այնտեղից բերում ու մարդուն է հանձնում եղիզնի մեջ թաքցրած կրակը:¹

Նախնադարյան այսպիսի Պրոմեթեոսների դերում հաճախ հանդես են գալիս թռչունները վառ կարմիր և կամ ԱՄԽԻ ՆՄԱՆ ՍԵՎ ԹՌՁՈՒՆՆԵՐԸ, նրանց սև և սրկված փետուրները վկայում են նրանց կատարած հոյաբարձի մասին: Այսպիսիներից է նախ և առաջ ազոավը:²

Ինչո՞ւն է, որ Պրոմեթեոս բառը հենց արծվի տիտղոսն է, որն օգտագործվել է որպես սրատես թռչուն կրակը հափշտակելու համար: Այս կարծիքը պաշտպանում է նաև Մ. Փ. Բոդրան, որն ասում է թե Պրոմեթեոս անունը առաջանում է pramatyus բառից, որ սանսկրիտերենում նշանակում է կրակ տանող:³

Պրոմեթեոս բառը նույն ոգով է բացատրում նաև Լաֆարգը: Վերջինս գտնում է, որ կրակ հափշտակողը և այն մարդկանց հանձնողն իրոք որ Պրոմեթեոսն է: Իսկ այս շրջանը դիտվում է

¹ Հմմտ. Միք. Բարբիկյան—«Դիցապաշտ Հելեդան կամ Հելեն դիք», Աթենք, 1936 թ., էջ 21—22:

² Հանդես № 4. Ա. Ի. Տյուլեցև—«Նախնադարյան կրոնը», էջ 103—104:

³ Հանդես ամսորյա № 11—12, էջ 502:

որպես նահապետական ընտանիքների քայքայման ժամանակաշրջան, մեր թվականից առաջ երկրորդ հազարամյակի վերջին և առաջինի սկզբին:¹

Ազգավրը, հրաբեր այս բարի թռչունը դիցաբանության մեջ հանդես է գալիս որպես Արև աստծո լրաբեր.

«Միթրային միշտ ուղեկցում, գործակցում են իբրև գաշնակիցներ Արևը, որին իր սուբհանդակ ազգավրի միջոցով շարունակ օգնության են հասնում»:²

Միթրան բաց դաշտում հանդիպելով առասպելական ցուլին մենամարտի մեջ է մտնում նրա հետ, բռնում է նրա եղջյուրներից, ցատկում նրա մեջքին և հաղթելով՝ հպատակեցնում է նրան: Միթրան ցուլին տանում է քարայր՝ իր օթևանը: Բայց ըմբոստ կենդանին չդիմանալով իր նկատմամբ գործադրվող բռնությանը և սպասվող ստրկական անաղատ պայմաններին, նորից դեպի ազատություն դուրս դալու փորձ է անում:

«Այն ժամանակ Արևը ազգավրի միջոցով հրաման է ուղարկում Միթրային՝ սպանել անհնազանդ կենդանին: դյուցազնը հակառակ յուր կամաց կատարում է այդ արյունալի գործը»:³

Հայ ժողովրդական դյուցազնավեպի մեջ.

«Հուր, Մհեր-Միհրը փակված է հրածին քարի մեջ, որի մոտ տնկած է հրատու սրբադան ծառը և որտեղ թառում է հրաբեր ազգավրը»:⁴

Ազգավրի բարի հատկություններն, ու նրա սրբազան գործողությունները մեր դիցաբանության մեջ երևում են ամենուրեք:

Այժմ թերևս հարկ լինի ավելացնել, որ ազգավր մարդկանց փրկում է մահվանից անգամ անձնագոհության միջոցով: Ազգավրի բարի հատկությունների մասին պահպանված առասպելը պատմում է, որ Զանգեզուրի

«Միծառնավանքը շինելիս անազին կաթսան տանում են գետը ջրով լցնում և բերում կերակուր եփելու բանվորների համար: Այդ ժամանակ ջրի հետ մի օձ ընկնում կաթսան և մնում է աննկատելի: Երբ կերակուրը եփվում է ու հասնում ճաշի ժամը՝ մի ազգավր պտտվում է կաթ-

¹ Անդ:

² «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ», էջ 270:

³ Բ. Խալաթյանց—«Հայ ժողովրդական դյուցազնական վեպ», էջ 64:

⁴ «Հանդես ամսօրյա», 1928 թ. № 5—6, էջ 251:

սայի վերև շարունակ կոկոռում: Բանվորներն ուշադրությամբ չեն դարձնում և նստում են ճաշելու, երբ ազուպին սհազին կոկոռոցով ընկնում է կաթսայի մեջ: Բանվորները կերակուրը պղծած համարելով, թափում են և այդ ժամանակ նկատում են օձի մարմինը: Դիտակցելով որ ազուպին յուր ինքնազոհությամբ փրկել է նրանց կյանքը, իսկույն պատանքում են ու մեծ հանդեսով թաղում, վրան դնում այդ մեծ քարը, իսկ օձի պատկերը նկարում են վանքի սյուններից մեկի վրա»:¹

Նման լեզվենգա գոյություն ունի նաև Մցխեթի ամբողջ կառուցող բանվորների ճաշի մասին: Ըստ որում այստեղ ևս օձերն ընկնում են բանվորների ճաշի կաթսայի մեջ և երբ հողմած բանվորները գալիս են ճաշելու, նրանք նկատում են, որ ազուպիները զույգ զույգ և երեք երեք ընկնում են կաթսայի մեջ: Համարելով ճաշը պղծված, այն թափում են կաթսայից հողի վրա, նրա միջից դուրս են գալիս

«Ինչպես հաստ պարան թունավոր օձեր»: Կենդանի մնացած թռչունները շրջապատում են այդ վիժվածքներից և կտոր կտոր անելով թափում են ցած»:²

Ազուպը հրապաշտական շրջանի խորհրդանիշ է, երկնային կառքի պատգամաբեր թռչունն է: Մեր ժողովրդական դյուցազնավեպի Մհերը, որ փակված է վանի Նահար-Պանա քարայրում և այնտեղ ապրած ու այն բարձունքներում իշխող Օղուզը Միր-Մհեր-Մհեր Մահրան է, որ թաքնված է վանում Մհերի դռան քարաժայռում արևմուտքից ունենալով ակռփի քարը կամ ազուպու քարը:³

Արևի այս հրաբեր ազուպը բարի էր մարդկանց հանգեպ, առաքինի և նույնիսկ անձնագոր:

Հետագայում քրիստոնեական կրոնի հաստատումից հետո, հրաբեր բարի ազուպը դարձավ ավերող՝ չարագուշակ թռչուն և օտարացվեց ու դիվացվեց: Նա կորցրեց իր սկզբնական սրբազան հատկությունները և հալածվեց ճիշտ այնպես, ինչպես հալածվեց Արևը և հետապնդվեց արևապաշտությունը:

¹ «Հանդես ամսօրյա», 4-րդ դիրք, էջ 48: Նույնը տես «Բաները» 21—22 թ.թ., էջ 32: Նույն առասպելը պատմվում է նաև այլ վանքերի շինության մասին:

² А. С. Хаханов—«Очерки по истории грузинской словесности», вып. I, Москва, 1895, էջ 280.

³ «Հանդես ամսօրյա», 1927 թ. № 10, էջ 594:

* * *

Արդ թե՛մ է պատկանել դամբարանը:

Բրոնզի գոտիները կատարել են տարբեր ֆունկցիաներ, նրանք եղել են սրպես դարդ, օգտագործվել են որպես ոլովայնը պաշտպանող զրահ, որտեղից հետագայում առաջացել է ամբողջական զրահի գաղափարը:¹ Գոտիները կատարել են նաև կրոնա-ծիսական դեր:

Գոտին Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչի մոտ

«...ունեցել է մոզական նշանակութուն և գործադրվել է իբրև յուրատեսակ հուռութ կամ «թիլիսիմ», որ պաշտպանում է չարից ու վտանգից, ապահովում հաջողութուն ու բերում է բարեբախտութուն»:²

Հետագայում հասարակական սիստեմների զարգացման և արտագրական հարաբերութունների մեջ կատարվող փոփոխութունների շնորհիվ իմաստավորվում և բարդանում են գոտիների վրա կատարած փորագրութունների գաղափարները:

Այս շրջանում գոտիների վրա երևում են ոչ միայն բնության սոսկական մեքարտադրումը կամ կենցաղային տեսարաններ, այլ շատ անգամ կրոնա-խորհրդանշային նշանակութուն ունեցող կոմպոզիցիաներ:³

Սանահինի և Սևանի գոտիների վրայի քանդակները կատարման ձևի և նրանց տրված բովանդակության իմաստով ներկայացնում են կրոնա-պաշտամունքային կոմպոզիցիայի անթերի օրինակ: Սանահինի գոտին որպես պաշտամունքային առարկա, չէր կարող պատկանել աշխարհիկ իշխանի, կամ մի այլ նշանավոր մարդու, որը կարող է քայքայվող տոհմի մեծ ծանրակշիռ ազդեցութուն ունեցած լինել:

Այս գոտին պատկանել է անշուշտ քրմի, հավանորեն մի ցեղապետի կամ տոհմապետի, որը միաժամանակ եղած պետք է լինի քրմապետ: Բոլոր դեպքերում գոտին առաջին հերթին ծառայել է որպես պաշտամունքային նշանակութուն ունեցող առարկա և ոչ որպես զարդ: Այդ երևում է նաև այն բանից, որ գոտու եղերքներում կան ծակոտիներ, որտեղից կախել են բո-

¹ Հմմտ. Ն. Սամվելյան—Հին Հայաստանի կուլտուրան, 2-րդ հատ., Երևան, 1941 թ., էջ 89:

² Անդ, էջ 89—90:

³ Անդ, էջ 89:

ժոժներ, թռչնաձև կախիկներ (պանալոկ), թալիսմալի պարագաներ՝ գոտուն և նրա կրողին խորհրդավոր տեսք տալու նպատակով:

Հնագիտությունից հայտնի է, որ անցման շրջանում գոտիների վրա քանդակած զարդերը ստանում էին նոր իմաստ, որ արտահայտվում էր խորհրդավոր պատկերների քանդակումներով և գոտիների եզրերից դանադան ձևի պանալոկների, շղթաների, քոժոժների և այլ մանր թալիսմաների կախումով:¹

Այդ երևում է նաև այն բանից, որ մինչև մեր օրերն էլ

«...գոտու այն մոգական նշանակությունը շարունակվել է պահպանվել նաև կրոնա-ձիսական հանգամանքներում, ինչպես օրինակ՝ քուրմերի և ապա քրիստոնեական քահանաների գոտիները, որ հագնում են որոշ պաշտամունքային ձիսակատարության ժամանակ»² պատարագի զգեստավորման միջոցին

* * *

Արդ՝ եզրակացնում ենք, որ Սևանի և Սանահինի գոտիները փորագրող վարպետ արվեստագետներն աննպատակ ժամանցով չեն զբաղվել: Նրանք գոտիների վրա փորագրված նկարներին տվել են խոր իմաստ և բարդ բովանդակություն: Դոտիների ողորկ ու լայն թիթեղադաշտերը դեռևս անձանոթ մարդու ձևաձևում հանդիսացել է բացառիկ հարմար միջոց իր պաշտամունքային մտահոգությունները նրանց վրա պատկերելու համար:

Եվ իրոք Սանահինի գոտու վրա մենք տեսանք Արևի ծնունդը, որը համապատասխանում է օրվա (թերևս և տարվա) զարթոնքին, այն ժամանակին, երբ սկիզբ է առնում կյանքը: Ապա Արևի հրավառ գունդը երևում է զենիթում, նա գտնվում է իր ուժերի առավելագույն ծաղկման շրջանում՝ դա կեսօրն է, կամ ամառը, երբ երկիրը լցվում է առատությամբ և երբ մարդն առատորեն վայելում է Արևի պարզակաթ բարիքը:

Այնուհետև սահելով ցած է իջնում Արևի ճառագայթաբաժակ գունդը. անկասկած սա հաղթանակորեն զենիթն անցած Արևն է, որ երեկոյան հոգնած մայր է մտնում: Այստեղ ձմեռ է, կանաչը չորացել է, իր ստեղծած կյանքը Արևի հետ ջուռն է մտել:

¹ Ս. Սամվելյան, *անդ*, էջ 89—90:

² *Անդ*, էջ 90:

Ավանդութիւնն ասում է, որ

«Երկնքում կա երեք թռչուն: Երբ սրանցից առաջինը ձայն է հանում, բացվում է առավոտը, երկրորդը ձայնելիս դառնում է կես օր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայնում, մութը պատում է աշխարհը»¹

Վերջապես լույսի և խավարի միջև տեղի ունեցող համառ պայքարում, որն երևում է ձիերի (որպես լույսի սիմվոլ) հարձակմամբ լուսնի (որպես խավարի սիմվոլ) վրա, հաղթում է լույսը և կրկին անգամ ծագում է կենսատու Արևը:

Չմտան մեջ է ծնվում գարունը, Արևը (հետագայում Միհրը—Միթրան):

Միթրան ծնվում է զեկտեմբերի 25-ին ձմեռային արևագարձից անմիջապես հետո: Դեկտեմբերի 25-ն Արևի ծննդյան օրն է: Արևը այդ օրն ավարտում է իր շրջանը և նոր ծնվում: Այդ օրը նշանավոր է արևապաշտ բոլոր ժողովուրդների մոտ, և ինչպես հայտնի է, Արևը պատկերող շատ աստվածներ ծնվում են զեկտեմբերի 25-ին.

«Դեկտեմբերի 25-ին ծնվում է Բուգա, Միթրա, Օսբրիս, Հորուս, Հերկուլոս, Բաքոս, Ադոնիս և Արևը պատկերող ուրիշ աստվածներ»²

Երկարատե ժահաշունչ ձմեռը շանթահարվում է, վերջանում: Հայկական լեռնաստանում և բարձրավանդակ դաշտերում նորից սկիզբ է առնում կյանքը, նորից ծագում է կենսաբար Արևը և պայծառ լույս ու ջերմութիւն տալիս Հայաստանի հնագույն բնակչին:

Հայաստանի հին բնակիչն իր հույսերն ու հավատալիքները կապում էր նոր ծնունդ առնող կյանքի Արևի հետ, նա կարծում էր, որ երկարատե ցրտաշունչ ձմռան մեջ թողեց իր դժվարութիւնները, տեւական տառապանքները: Նրա մտայնութիւնը գարնան ծննդի մեջ էր մարմնացած արթնացող բնութիւյան կենսաբար ուժը, մարդու ապահովութիւնն ու նյութական բարիքը: Հենց այսպես էլ նախաբնիկը պատկերացրել ու փոխադրել է Սանահինի դոտու վրա իր կրոնական համոզմունքները—Արևի շարժումը:

¹ «Ազգագրական հանդես», 1897 թ., էջ 219:

² Մ. Գ. Ֆերանյան—Քրիստոնեութիւնն ու հին հեթանոս կրոններու բաղադրականը, էջ 391:

* * *

Իստոնալով արդեն նկարագրված կճուճի արժեքավորմանը, հարկ կլինի նկատել, որ օձերի պաշտամունքը գոյություն է ունեցել շատ երկրներում: Էլամում օձը համարվել է տան ծառան, քարիք ապահովող կենդանի և մարդկանց կողմից պաշտպանության է արժանացել:

Հայաստանում նույնպես պաշտամունքի առարկա է եղել օձը, հովանավորվել և համարվել է տան հարստությունն ապահովող, բայց ու երջանկություն բերողը, տան «գովալթը»:

Հնդկաստանում օձը համարվում էր սուրբ. նույնպես և հին Եգիպտոսում էին պաշտում ու մեծարում օձին: Եգիպտացիք uraeus կոչվող օձի խորհրդանշան ունեին, թագավորները և քուրմերն այն գործածում էին որպես գլխի զարդ:¹

Նոր-Բայազետի դամբարաններից է. Լալայանի պեղումները ժամանակ դառնված բրոնզյա ապարանջաններից շատ օրինակներ կան, որոնց ծայրերը նմանեցված են օձի գլուխների, ինչպես և շատ կավե ամաններ, որոնց վրա նկարված են օձի պատկերներ:

«Փյունիկացիները և ուրիշ արևելյան ազգեր իրենց աստվածները Պարսից Միթրան-Միշնորդ, Փրկիչ, Մեղքեր քավող աստվածներով ծանոթ էր, օձի խորհրդանշաններով կներկայացուցեին»:²

Հերոդոտը այցելելով Եգիպտոս գրում է. Թեբեսի շրջակայքում սուրբ օձեր կան, որոնք մարդկանց համար միանգամայն անփնաս են: Այս օձերը փոքր են և ունեն երկու եղջյուրներ, եբք սրանք մեռնում են, սրանց մարմինները Եգիպտոսի տաճարի մեջ այրում են, որովհետև այդ օձերը Յուպիտեր աստծո համար սուրբ են ճանաչված:³

Սանահինի հնագույն դամբանից հանված չորս օձերով զարդարված կճուճը պիտք է դիտվի որպես օձ տոտեմին նվիրված պաշտամունքի առարկա: Եբք աչքի առաջ ենք ունենում այս կճուճի արտաքին ձևը և նրա վրա դրված կենդանիների արձանիկներն ու կենդանի տպավորություն թողնող օձերի մարմինները, և ընդհանրապես կճուճի ամբողջ միջավայրը, հաստա-

¹ Անդ, էջ 59.

² Մ. Գ. Ֆերահյան, անդ, էջ 58.

³ Նույն տեղ:

տապես համոզվում ենք, որ այն պատրաստվել է տեղում և պատկանել է կրոնական ծեսեր կատարող մարդուն: Ավելին. դամբարանից հանված ավելի քան 1500 հուլունքները, փորագրված և հասարակ ապարանջանները, մատանիները և պերճանքի մնացած պարագաները հաստատ հող են ստեղծում պնդելու, որ ննջեցյալի արտաքին պճրանքը կապված պետք է լինի կրոնական ծիսական խորհրդավորութիւններին և արարողութիւններին հետ: Իսկ եթե այս բոլորին ավելացնենք այն, որ նույն դամբարանից հանված բրոնզե գոտու վրա փորագրված քառաձիւրկի բոլոր երկք խմբերը պատկանում են Միհր-Արեւին և Միհր-Արեւը անբաժան է իր ձիւրից ու գոտու վրա մեկ տեղով երկացող Արեւ լրարբեր ազնավից, միանգամայն պարզ կէտանա, որ բրոնզե գոտին ունեցել է կրոնական նշանակութիւն և դիտվել է որպէս պաշտամունքի առարկա: Մանավանդ որ նրա թիթեղադաշտում կատարված փորագրութիւնները բերում են այն եզրակացութիւն, որ գոտու վրա բարդ քանդակումների միջոցով պատկերացված է արեւապաշտութիւն հետ կապված մի ամբողջական կոնցեպցիա:

* * *

Այսպիսով եզրակացնում ենք, որ 1. Սանահինի դամբարանը հավանորեն պատկանել է քրմի, բայց ավելի հավանական է՝ մի քրմապետի, իսկ նրա միջից գտնված կնուճը և գոտին որպէս պաշտամունքի առարկաներ կազմել է դամբանի մեջ թաղված քրմի անձնական սեփականութիւնը: Դամբանի մեջ գտնված օձանիշ կնուճն ունեցիլ է պաշտամունքային իմաստ:

2. Հիմք ունենալով վերոհիշյալ երկու գոտիները և ժողովրդի մեջ մնացած ավանդութիւնները, պետք է ենթադրենք, որ Հայաստանում առաջին հազարամյակի սկզբում (մ. թ. ա) արեւապաշտութիւնը տարածված կրոն էր:

Հայաստանի և Անդրկովկասի պայմաններում մեզ անծանոթ է նյութական կուլտուրայի այնպիսի հիշատակարան, որի վրա այդքան պարզ և ամբողջական կերպով պատկերացված լինի արեւապաշտութիւնը, ինչպէս այդ տեսնում ենք վերոհիշյալ երկու գոտիների վրա:

3. Գոտու վրա քանդակած Արեւի նշանը, քառաձիւրկը և ագռավի պատկերը նմիրված են Արեւ աստծուն և ոչ մի այլ բանի: Այդ ապացուցվում է գոտու վրա փորագրված կիսալուսնի նշան

նով, որով հաստատվում է, որ խոսքը վերաբերվում է լուսատուներին:

4. Հայաստանում արևապաշտության հարցերը շոշափող բանասիրական գրականության համար մինչև այժմ գլխավոր աղբյուր են ծառայել հին մատենագրության հատ ու կտոր տեղեկությունները և ավանդությունները, ինչպես նաև տեղանուններն ու անձնանունները: Սակայն մինչև այժմ չի քննվել արևապաշտության հետ կապված Հայաստանում հայտարարված նյութական կուլտուրայի հիշատակարաններ, մի բան, որի պահանջագովել է հնագիտական ուսումնասիրությունների մեջ: Սևանի և Սանահինի գոտիները լրացնում են այս պակասը:

5. Սանահինի դամբարանից հանված կճուճը և նույն դամբարանից հանված կավե մյուս սմանները իրենց ժամանակագրությամբ համընկնում են Նոր-Բայազետի նախկին գավառի, Կիրովականի, մասամբ Թեղկին-Լագերի, Գետաբեկի և Ղալաքենդի դամբարաններից հանված կերամիկայի ու մնացած իրերի հետ:

6. Թերևս հնարավոր լինի ցույց տալու գոտիների վրայի քանդակների բովանդակությունը որոշ վերապահումով կապել Հայաստանի հնագույն բնակչի կենցաղում կատարված, կամ ավելի ճիշտ՝ հասարակական-արտադրական հարաբերությունների մեջ առաջացած դասակարգային նախնական շերտավորման հետ. երբ արդեն երևում են տիրոջ և սպասավորի փոխհարաբերության նախնական, բայց որոշակի նշանները, որը գուցե թե կապվել է նաև աստվածներին՝ սպասարկելու գաղափարի հետ և այդ պատկերացումը բերել է այն համոզման, թե պաշտվող աստվածը նույնպես պետք է ունենա իր սպասավորները:

7. Ձիերի պարանոցների մոտ գտնվող նետերի դիրքը թելադրում է մտածելու, որ դրանք գուցե նետերի ձևով պատկերացված Արև աստծո ուղարկած ճառագայթներն են, որոնք շարժման մեջ են զնում և ուղղություն տալիս ձիերին ու երկինքը կապում երկրի հետ. մասնավորապես է ընկնում, որ նետերն իրենց սուր ծայրերով թեքված են դեպի երկիրը, իսկ վերջավորությամբ դեպի երկինք՝ նրանք շեղակի իջնող ճառագայթների տավորություն են թողնում:

8. Ի վերջո Սևանի ավազանից հայտարարված գոտու վրայի պատկերների ու Սանահինի բրոնզե գոտին և նույն դամբարանից հանված իրերի ուշադիր ուսումնասիրությունը հիմք չի տալիս պնդելու, թե արևապաշտությունը մեզ մոտ առաջին հազարա-

մյակի սկզբներում (մ. թ. ա.) դրսից ներմուծված երկույթ է։ Այժմի հազմանական է, որ արեւադաշտուրբայունը Հայաստանի հին քնակչի կրոնական ինքնուրույն մտածողութիւնն էր՝ առաջա-
ցած նույն կերպ, նույն պայմաններում, ինչ կերպ և ինչ պայ-
մաններում այն կարող էր ստեղծվել մի այլ երկրում և մի այլ
ժամանակ։

